# ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության առաջին տարեդարձի հանդիսություններին մասնակցելու համար, Գերագույն Հոգևոր Խորհրդի հատուկ հրավերով, Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքական տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը։ Գահակալության տարեդարձի առթիվ Մայր Աթոռ ժամանեց նաև Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական նվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը։*

***

*Սեպտեմբերի 2-ին առաջինը Մայր Աթոռ ժամանեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը։ Սրբազան Հորը դիմավորելու համար օդանավակայան էին գնացել գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հոգեշնորհ Տ. Եղիշե արեղան։*

*Սրբազան Հայրը ժամը 12-ին հասավ Մայր Աթոռ և «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Մայր Տաճար։ Ներկա էին ամբողջ միաբանությունը, Ճեմարանի ուսանողները, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։ Ողջույնի խոսք ասաց գերապատիվ Տ. Սահակ սրբազանը, որին պատասխանեց գերաշնորհ Տ. Սիոն սրբազանը, իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնելով, որ մի անգամ ևս գտնվում է Ս. Էջմիածնում և Մայր Հայրենիքում։ Սրբազանը խանդավառությամբ արտահայտվեց Մայր Աթոռում կատարվող շինարարական աշխատանքների մասին և ավելացրեց, որ ինքը այս անգամ ավելի երկար կմնա Մայր Աթոռում, միասին աշխատելու համար Նորին Ս. Օծության վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ։*

*Ապա նույն հանդիսությամբ Սիոն սրբազանը առաջնորդվեց Վեհարան, որտեղ նրան սրտառուչ ողջագուրմամբ ընդունեց Վեհափառ Հայրապետը։*

***

*Սեպտեմբերի 30-ին, Վարագա Խաչի տոնի օրը, Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռի տեղապահ Ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը։ Նորին Սրբազնության ընկերակցում էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության երիտասարդ և շնորհալի միաբան հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը։*

*Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորեցին լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Մուշեղ աբեղաները։*

*Ժամը 3-ին Մայր Աթոռ հասավ Նորին Սրբազնությունը և «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Մայր Տաճար, ուր Իջման Ս. Սեղանի առաջ իր ուխտը և աղոթքը կատարելուց հետո, առաջնորդվեց Վեհարան։ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը սրտառուչ ողջագուրմամբ ընդունեց Նորին Սրբազնության։*